



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13076

89199

5-22

1891
Հ. Ն.

Ա. Ղ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ.

ՀՈՎԱԿԻ ՀԱՐՄՆԱՑՈՒՆ

(ՀԱՅԻ ԱՆՑԵԱԼԻՑ)

Մեր գործերը մեր բարի ու չար
հրեշտակներն են, որոնք ամեն
տեղ ուղեկցում են մեզ:

ՕՏԱՐ ՀԵՂԻՆԱԿԻՑ.

ՄՈՍԿՈՒՍ.

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐՈՒՈՒԴԱՐՆԱՆԻ.

1891
(13)

891-99

5-22

20 03

Յիսակովսկու քիմիական և ֆիզիկական խմբագրություն.
1891 թվականի, 12-րդ, մասի լրագիր.

89199

Ա. Ղ. ՄԱՍԿԱՆՆԱՆ.

Մ-22

ՀՈՎՎԻ ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

(ՀԱՅԻ ԱՆՑԵԱԼԻՑ)

Մեր գործերը մեր բարի ու չար
հրեշտակներն են, որոնք ամեն
տեղ ուղեկցում են մեզ:

ՕՏԱՐ ՀԵՂԻՆԱԿԻՑ.

ՄՈՍԿՈՒՍ.

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.

1891

(13)

17603

Ն Ո Ւ Է Ր

Дозволено цензурою. С.-Петербургъ, 15 декабря 1890 года.

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ.

Типографія М. Бархударянъ, Газети. пер. д. Лявонзова.



17043

ՀՈՎՎԻ ՀԱՐՄԱՑՈՒՆ.

I.

Մի երեկոյ էր ցնծալի զարնան.
Հանդարտ փչում էր քամին լեռներից
Եւ լուսնիակը նաւակի նման
Կողում էր, փախչում ամպերի տակից:

Քաղցրիկ հնչում էր հովվի սրինգը՝
Սրճագանք տալով ձորերի մէջում:
Սրնգի ձայնով՝ կարծես, հովիւը
Սիրելուն զիւղից իւր մօտ էր կանչում:

Խոր ձորակի մէջ, գետի ափի մօտ՝
Պարզ երևում էր հայկական զիւղը,
Ահա և այնտեղ ինձ վաղուց ծանօթ
Աղքատ զիւղացու փոքրիկ նկուղը:



Նորա կիսաքանդ, հին սրահի տակ
ձրագի լոյսը առկայծում էր թոյլ:
Սիրուն գեղջկուհին, նստած միայնակ՝
Ստէպ տալիս էր ճրագին նշոյլ:

Համեստ սեղանը պատրաստած արդէն,
Սպասում էր նա իւր հօրը դաշտից:
Դրդուած սրնգի ողբալի ձայնէն
Թափում էր արցունք սիրուն աչքերից:

Ինչո՞ւ էր լալիս թշուառ աղջիկը.
Դուցէ՛ յիշում էր մօրը հանդուցեալ...
Մի՞թէ կուսական անմեղ սրտիկը
Կարող չէ երբէք դաղանիք ունենալ...

Նա հասկանում էր սրնգի լեզուն.
Նա իմանում էր հովվի մեղեդին:
Երկու հոգիներ անբիծ, վառվռուն՝
Եթերքումն էին ապրում միասին...

II.

Ահա՛, գալիս է դաշտից գիւղացին՝
Նիհար, կիսամեռ և խապառ յոգնած,
Մաշած պտտառած շորերը հագին:
Նա ծերունի է, կմախք է դարձած:

Հագիւ ողջունեց նա միակ դուստրին,
Թուլացած ընկաւ չոր գեանի վերայ.
Կամեցաւ կանգնել, աշխատեց ուժգին,
Բայց նորից ընկաւ և կանչեց. «մեռայ»...

Դուստրը սարսափեց, վաղեց դէպ նորան.
Դրկեց ծերունու գլուխն ալեօր:
«Կեանքս մաշեցին... մարդիկ հոգեհան»...
Խօսեց ծերունին ձայնով անսովոր:

— «Ի՞նչ պատահեց քեզ, աստ ինձ, հայրիկ»...
Խօսեց աղջիկը նորան զրկելով:
«Փախի՛ր իմ տանից, գաւաճիս քաղցրիկ»...
Ասեց ծերունին արցունք թափելով:

«Փախի՛ր, իմ Նազլու, շուտով հեռացի՛ր
 «Եւ թող ինձ պատեղ մնամ միայնակ...
 «Տեղիցդ կանգնի՛ր, գլուխդ աղաւի՛ր.
 «Երկար խօսելու չ'ունենք ժամանակ...»

«Այնտեղ՝ գիւղի մէջ, ստոր գիւղացիք
 «Տանուտերի հետ պայման են դրել
 «Քեզ խլել ինձնից, իմ սիրուն դատրիկ...
 «Թուրք աղայի մօտ քեզ ընծայ տանել...»

«Բայց ես չ'ունիմ ոյժ, որ քեզ պաշտպանեմ...
 «Ահա՛, մօտիկ է վախճանը կեանքիս...
 «Արի՛, մօտեցի՛ր, թող քեզ համբուրեմ...
 «Որ կարող լինեմ... հանգիստ տալ հօգիս»...

—«Բայց ես ուր գնամ, աստ ինձ, հայրի՛կ...
 «Ամբողջ գիւղի մէջ չ'ունենք բարեկամ...
 «Մինչեւ ե՛րբ արդեօք անպիտան մարդիկ
 «Պիտի հալածեն մեզ ամեն անգամ»...

Թշուառ աղջիկը սաստիկ ողբալով՝
 Իւր հօր շնչով ձեռքերը պատեց.
 Մի քանի ընկալէ անցոյս սգալով՝
 հօր միւռքի մէջ երեսը թաղեց...

«Նազլու, սրբնդի ձայնը լսում ես».
 Խօսեց ծերունին դստեր ականջում:
 «Այն մեր Աբէլն է, դու ճանաչում ես.
 «Ես չեմ սխալվում այն նա է ածում:

«Նա միակ մարդն է մեր ամբողջ գիւղում,
 «Որին կարող ես հաւատ ընծայել:
 «Ես գիտեմ, նա քեզ վաղուց է սիրում,
 «Նա ուխտ է դրած քեզ հետ պսակուել:

«Գնա՛ նորա մօտ. ինձնից բարեւի՛ր
 «Եւ պատմի՛ր նորան այս անցքը բոլոր:
 «Վերջին օրհնանքս, արի՛, ստացիր...
 «Հեռացի՛ր և թող հօրդ ալեւոր»...

—«Թող մեռնեմ քեզ հետ, հայրիկ, խնդրում եմ...
 «Երբէք չեմ կարող քեզնից բաժանվել»...
 «Հեռացի՛ր շուտով, ես պատուիրում եմ...
 «Նազլու, կարող ես հօրդ անարգել»...

«Գոյն-գոյն ծաղկանց մէջ և կանաչ դաշտում
 «Կանգնէ՛ք միասին փայլուն լուսնի տակ.
 «Աստուած իւր ձեռքով, ինչպէս Եդեմում,
 «Կըղնէ՛ ձեր գլխին անթառամ պսակ...»

«Դէ՛հ, կանգնի՛ր, որդեանկ, մի՛ յուսահատուիր...
 «Ժողովի՛ր ուշքի՛, փախի՛ր այստեղից...
 «Ահա՛, դալիս են, երկար մի սպասիր.
 «Ձայներ կա՛ լսում՝ գինետան կողմից»:

—«Մնաս բարե, հայր»... ասաց գեղջկուհին
 «Սաստիկ ցաւալի և ճնշուած ձայնով:
 «Գնաս բարե, նազլու»... խօսեց ծերունին՝
 Վերջին համբոյրը դստրից առնելով:

Աղջկը կանգնեց տան դռան առջև,
 Ընկաւ, համբուրեց սեամի մեծ քարից.
 Բարձրացաւ տեղից և այնուհետև
 Լալով բաժանուեց հայրենի տանից...

Հէնց նոյն րոպէին ճրագը հանգաւ
 Թշուառ գիւղացու հին սրահի տակ.
 Ծերունին անշունչ մի դիակ դարձաւ,
 Խեղճի նկուղը մնաց մութ, դատարկ...

Շուտով մօտեցան գիւղացիք արբած
 Դժբաղդ ծերուկի անտէր նկուղին,
 Գտան ծերունուն գետնի վրայ ընկած,
 Բայց չէր երեւում սիրուն գեղջկուհին:

«Ո՛ւր է աղջկդ, է՛յ, դո՛ւ, սատանայ...
 Ասեց ծերուկին լերբ տանուտէրը:
 «Տե՛ս, եթէ աղան նորան չբատանայ,
 Վաղը կը քանդի գիւղի տները»:

Սառած գիակը չէր կարող խօսել.
 Նա չէր սարսափում և այդ խօսքերից:
 Թշուառ գիւղացին հանգիստ էր դտել
 Անգութ դրացոց չար պահանջներից:

III.

Նազլուն վազում էր ուշքը կորցրած,
 Այծեամի նման թեթև թռչելով,
 Աբէլի վերայ միակ յոյս դրած,
 Վազում էր փախչում՝ ետև նայելով:

Ահա, մօտիկ է և այն բլրակը,
 Որի զագաթին ոչխարն էր նստում.
 Այնտեղ գեղջկուհու բախտի նաւակը
 Խարիսխը դցած հանգիստ էր առնում...

Այնտեղ էր դանդաղում սուրբ ուխտատեղին,
 Որին աղջիկը գնում էր պաշտել.
 Այնտեղ կարող էր թշուառ անմեղին
 Նորա պաշտելին պահպան լինել...

Այնտեղ էր բղիտում մաքուր աղբիւրից
 Եւ Երջանկութեան առատ վտակը.
 Կարող էր Նազլուն խմել այդ ջրից
 Եւ զովագնել սրտի փափագը...

Բայց մեր կենսական ծովը սոսկալի
 Երկար է տանջում իւր մէջ խեղդուողին.
 Երբ բարձրանում են ալիք կատաղի,
 Ձեն թողնում հասնել մօտաւոր ափին:

Նազլուն լսում է ոտքերի ձայներ.
 Ահա, հասնում են նորա ետեւից.
 Երկու գիւղացի ուժեղ տղաներ՝
 Ձիաներ հեծած՝ գալիս են գիւղից:

Խեղճի մագերը գլխին բարձրացան
 Եւ աչքերի մէջ զարհուրանք փայլեց.
 Նորա ոտքերը իսպառ թուլացան,
 Աշխարհը գլխին՝ կարծես՝ խաւարեց...

Բայց շատ մօտիկ էր անտառն այդ տեղից.
 Իւր վերջին ոյժը Նազլուն ժողովեց
 Եւ նոյն բոպակին՝ դուրս գալով ճամբից՝
 Մութ ծմակի մէջ հետքը կորցրեց:

Նա այդ կուսական անտառի խորքում
 Ուժասպառ ընկաւ խիտ ծառերի տակ.
 Եւ մի ծաղկաղարչ մորենի թփում
 Մնաց դողալով երկար ժամանակ:

Գիշերուայ կէսը անցել էր արդէն,
 Բայց Նազլուն շարժուել չէր վստահանում.
 Վերջապէս կանգնեց, նայեց դէս ու դէն,
 Դուրս եկաւ զաշտը երկիւղը սրտում:

Կարծես՝ քնած էր ողջ բնութիւնը.
 Ձեր լսվում դաշտում ոչ մի ձայն, ծպտուն.
 Եւ արշալոյսի մեղմ սառնութիւնը
 Արդէն զգում էր խղճալի Նազլուն:

Ահա, բարձրացաւ նա բլրի վերայ՝
 Յուսալով այնտեղ Աբէլին գտնել,
 Բայց տեսաւ այնտեղ՝ որ ոչ ոք չըկայ,
 Սկսեց խեղճը առ Աստուած մտղթել...

Տխուր նայելով Լուսաբեր ասողին՝
Աղօթում էր նա խիստ մրմնջալով
Եւ իւր սիրելի քաղցրիկ Աբէլին
Կանչում էր ճնշուած, սգալի ձայնով...

Բայց ո՞ւր էր արդեօք նորա Աբէլը.
Ինչո՞ւ չէր տալիս նորան պատասխան.
Արդէն կապել էր խեղճի կռները
Եւ բանտարկել էր չարասիրտ աղան:

Մի մութ, գետնափոր, դարչահոտ գոմում
Տանջվում էր սաստիկ հովիւը թշուառ.
Նա առամներով կապանքն էր կրծում,
Բայց ազատուելու չունէր մի հնար...

«Է՛յ, դ՞ու, բարեկամ, ո՞վ ես, մօտեցի՛ր»...
Կանչում էր աղան իւր պահապանին.
«Արե՛, խղճա՛ ինձ, այս բանտից փրկի՛ր,
«Կրտամ՝ քեզ ոչխար մի գառը տակի՛ր»...

Բայց պահապանը՝ կարծես՝ չէր լսում
Նորա սրտաշարժ, ջերմ աղաչանքը.
Քարացած՝ կանգնած անգութ զրսում,
Չէր ուզում բանալ խեղճի կապանքը:

«Կրտամ՝ քեզ տասը և էլ աւելի»...
Ասեց հովիւը խիստ մոմմքուելով.
«Միայն Նաղլուին գտնեմ կենդանի,
«Ստացիր հօտս ոտով ու գլխով»...

Նաղլուն կանգնել էր բլրի զագաթին
Եւ ապշած՝ հեռու լեռներին նայում.
Կարծես՝ նա տեսաւ հօտի մէջ հովվին
Այնտեղ՝ լեռներից մէկի ստորոտում:

Իջնելով բլրից, նա վազեց շուտով
Դէպ այն հեռաւոր լեռան ստորոտին.
Նա անցաւ դաշտով և շատ ձորերով՝
Վերջապէս՝ հասաւ ցանկացած կէտին:

Ի՞նչ գտաւ այնտեղ խղճալի Նաղլուն.
Մի հին, կիսաքանդ մատուռ հայկական,
Մի հնադարեան գերեզմանատուն,
Մի սարսափելի ախուր տեսարան:

Աւերակի մօտ կանգնած յուսահատ,
Նա իւր Աբէլին բարձրաձայն կանչեց.
Նա երկար կրկնեց, սպասեց նա շատ,
Միայն բուէճից պատասխան լսեց...

Եթէ կանգնէին զերեզմաններից
Հայի բազմերախտ նահատակները,
Ի՞նչ կըլսէին արդեօք նոցանից
Նոցա անարժան, թոյլ ժառանգները...

Արդէն բացւում էր մի պարզ արշալոյս,
Գոյն-գոյն ներկ տալով երկնակամարին.
Հայուհին չունէր այլ ևս մի յոյս,
Տխուր նայում էր փլատակներին...

Կարծես՝ վիճակը սահմանեց նորան
Մնալ միշտ այդպէս որք ու վշտահար...
Այդտեղ լսելով բուէճին միայն՝
Յուսահատ նստել, տանջուել չարաչար...

Արդեօք օգնութիւն ումնի՞ց սպասէր
Թշուառ, անպաշտպան, դժբախտ Հայուհին...
Ձէ՛, ամօ՛թ է մեզ, զիւղացիք, Հայեր,
Գողտրիկ Հայուհուն միք տալ օտարին...

Մի խորամանկ մարդ, մի բախտախնդիր
Ուզում էր ծծել կոյսի արիւնը
Եւ խաբէութեամբ գործերով նանիր
Ոտնակոխ անել նորա անունը...

Բայց հնազանդուելով աղայի կամքին
Եւ վախենալով նորա մորակից՝
Հալածում էին սիրուն Նազլուին
Դրացիները Հայրենի գիւղից:

Վերջապէս՝ Նազլուն մնաց յուսահատ.
Եռանդուն սրտում տիրեց սառնութիւն.
Այդպէս սրտամաշ, այդպէս ծարահատ՝
Ընտրեց իւր համար մի նոր ուղղութիւն:

IV.

Նազլուն վազում էր սար ու ձոր ընկած.
Թէ ո՞ւր էր դնում, ինքն էլ չըզիտէր.
Այդ ամբողջ օրը ծարաւ և սոված՝
Խեղճարի պէս՝ նա թափառում էր:

Նա լեռների մէջ, ահա՛, տեսնում է
Մի փոքրիկ ամրոց ժայռերի վերայ.
Այդ շինութիւնը վաղուց մնում է
Հայի անցեալից իբրեւ մի վկայ:



Խիտ անտառներ կան նորա չորս կողմին
 եւ խոր ձորի մէջ մի գետ է հոսում.
 Կարծես՝ խաւարը մութ դժոխային
 Միշտ այդ ձորումն է միայն բնակվում:

Հազիւ տեսնում է մի հետք մարդկային
 Այդ սարսափելի, լուռ շրջակայքում.
 Գարնան ժամանակ, թէ ամառային
 Միշտ արեան հոտ է այդ տեղ տարածվում:

Նազլուն տեսնում է իւր մօտ մի աղբիւր,
 Որը բրդխում էր մի քարաժայռից.
 Նա կամենում է խմել փոքր ինչ ջուր.
 Յանկարծ լսում է մի ձայն այդ տեղից:

«Նազլու, այդ դ՞ու ես, ա՛յ դու խելագար»...
 Մի տաճկի աղջիկ ասեց, մօտեցաւ:
 — Սիրելի՛ Պաթմա, դու ուստի՞ց եկար...
 Խօսեց մեր Նազլուն և փաթաթուեցաւ:

«Ես զարմանում եմ, Նազլու, քո սրտից.
 «Կարծես՝ դու չեսնես բնաւ մի երկիւղ:
 «Դու ձեռք ես քաշել մի՞թէ քո զկնից,
 «Կամ թէ կերել ես արբուցիչ պտուղ:

«Ահա՛, անցնում է մի ամբողջ տարի,
 «Որ ինձ փախցրին հայրենի տանից.
 «Այստեղ մնում եմ իբրեւ մի գերի
 «Ոչինչ չեմ տեսնում բացի արիւնից:

«Տէս, այն ձորի մէջ, անտառի խորքում՝
 «Երկու ծխոտած, մեծ վրաններ կան.
 «Աւաղակի են նոքա պատկանում,
 «Որի ձեռքին է և թշուառ Պաթման:

«Ո՛չ մարդ, ո՛չ դաղան երբէք չեն կարող
 «Կենդանի մնալ մեր սահմաններում:
 «Եւ այն երկնքում բարձրից հրեող
 «Արծուին անգամ երբէք չէ տեսնվում:

«Ահա՛, ընկած է այդ տեղ մի կառափ,
 «Դա պատկանում է մի խեղճ անցորդի.
 «Չեմ կարող դորան տեսնել անսարսափ,
 «Նմանութիւն չունի բնաւ դա մարդի...»

«Բայց դու ի՞նչ ունես, ասա՛ ինձ, այստեղ
 «Այս սարսափելի խաւար դժուրքում,
 «Պատմի՛ր ինձ շուտով, քոյրի՛կս անմեղ»:
 Բարեւիրա Պաթման այսպէս էր խօսում:

Նազլուն սկսեց պատմել մի առ մի
Սկզբից մինչ վերջ իւր տառապանքը.
Փայլեց երեսին չքնաղ Փաթմայի
Դառն արտասուքի առատ հոսանքը:

Անէծք թափելով հայ գիւղի գլխին՝
Փաթման Նազլուի կռնիցը բռնեց
Եւ իւր մանկութեան միակ ընկերին
Մի քարայրի մէջ տարաւ, թազցրեց:

V.

Նոյն երեկոյեան վրանների մօտ
Կանգնած էր տխուր մի աղքատ տղայ,
Բոբլիկ ոտներով՝ երեսը կեկտոտ.
Եկել էր մտնել նա այդ տեղ ծառայ:

Այդ տեղ կանգնած էր և քաջ Ասկարը՝
Զօրեղ իշխանը աւաղակների.
Այն տեղ էր նոյնպէս պառաւ Նիգարը—
Ծեր պահապանը նորա հարեմի:

Ալեոր կինը ազդու խօսքերով
Հազիւ համոզեց զուռղ Ասկարին
Ընդունել ծառայ, գոնէ խղճալով՝
Կորած, մոլորուած, թշուառ տղային:

Միւս առաւօտից ցնցոտիներում
Տանում էր արօտ տղան հորթերին:
Մի՞թէ, ընթերցող, դուք չէք ճանաչում
Տղայի շորում սիրուն Նազլուին:

Փաթմանն էր խնդրել պառաւ Նիգարին,
Որ խեղճ հայուհուն այդպէս պաշտպանէր,
Մինչև որ մի լուր հասնէր Աբէլին,
Մինչև որ նա գար, Նազլուին տանէր:

VI.

Բայց ի՞նչ էր շինում թշուառ Աբէլը:
Նա իւր կապանքից արգէն ազատուեց.
Թողնելով գիւղում իւր ոչխարները
Սիրելոյն փնտռել անյապաղ վազեց:

Նա հասաւ շուտով ծանօթ բլրակին
 Եւ գտաւ այն տեղ մէկ քանի հետքեր.
 Նա հասաւ նոյնպէս և աւերակին,
 Ուր Նազլուն կրեց անսահման վշտեր:

Փլատակների մէջ հետքերը կորան:
 Երկար ժամանակ տղան ակնարկեց,
 Բայց չըզտնելով այդ տեղ մի նշան,
 Մի քարի վերայ յուսահատ նստեց:

Եւ իւր սրինգը գօտկից հանելով՝
 Նա մօտեցրեց իր շրթունքներին.
 Նորա դիւթական, երկնային ձայնով
 Սկսեց ածել իւր հին մեղեդին. . .

Համայն աշխարհը այդ քաղցր ձայնին՝
 Կարծես թէ լռած՝ հանդարտ լսում էր:
 Եւ արեգակը նոյնպէս վշտագին
 Ամպերի մէջից տխուր նայում էր:

Յանկարծ Աբէլը տեսնում է այդ տեղ՝
 Աւազի վերայ՝ ուլունքներ ընկած.
 Կարծես թէ դիտմամբ զեղջիւղահին անմեղ
 Իւր զարդարանքից լինէր բաժանուած:

Այո՛, նորանն էր այդ զարդարանքը.
 Աբէլը նորան իսկոյն ճանաչեց:
 Եւ վերաւորուած սրտի տանջանքը
 Յաղթանդամ հովվին գետին զորեց:

Կրծքին սեղմելով այդ ուլունքները՝
 Նա արտասովում էր երկար և երկար...
 Արդէն մօտեցաւ երկրորդ զիշերը,
 Բայց նորա Նազլուն չըկար և չըկար...

VII.

Անցան շատ օրեր, անցան ամիսներ,
 Նազլուն դեռ չունէր Աբէլից համբաւ:
 Փաթման տալիս էր նորան շատ յոյսեր,
 Բայց նա դոցա մէջ ոչինչ չըգտաւ:

Հրաշալի օր էր. հանդարտ եղանակ,
 Երկնքի վերայ մի ամպ չէր տեսնվում:
 Անտառում Նազլուն նստած միայնակ՝
 Փաթմայի համար մի բան էր նաշխում:

Մի ծաղկափթիթ, գեղեցիկ թաւում
Նա մի ապահով՝ փոքրիկ տեղ ունէր.
Այնտեղ գնում էր նա առանձնանում
Եւ ծաթման նորան միշտ այցելում էր:

Կէս օր է արդէն: Ուրախ է Նազլուն:
Արդէն քնած են աւազակները:
Նորա վշտահար, անհանգիստ հոգուն
Բերկրանք կը բերէ նորա ընկերը:

Ահա, գալիս է նորա մօտ ծաթման,
Կերակրում խեղճին, գգվում, փաղաքշում:
Նա համբուրում է սիրտ տալիս նորան,
Իւր ձեռքով՝ նորա զլուխը սանտրում:

Դեռ պատուիրած է թշուառ Նազլունին
Շքեղ մազերը թաղցրած պահել.
Դեռ սահմանուած է այն փափուկ մարմնին
Ցնցոտիներում հալուել ու մաշուել:

Ծաթման պատմում է նորան երազներ
Եւ բացատրում իւր խելքի կտրած.
Մանկական կեանքից յիշում է անցքեր,
Երանի տալիս օրերին անցած:

Նազլուն զրկել է իւր բարեբարին:
Նա համբուրում է նուրբ շրթունքներից.
Նայելով նորա սիրուն աչքերին,
Շնորհակալ լինում պարզ սրտի խորքից:

Մի հրացանի ձայն յանկարծ որոտաց:
Նազլուն ու ծաթման մի ակնթարթում
Ընկան գետնի վրայ, մնացին փռուած.
Երկուսի կրծքից արիւն էր հոսում:

Նազլուի վէրքը ձախ ծծի տակ էր,
Նա իսկոյն մեռաւ. բայց թշուառ ծաթման
Աջ կողքի վերայ մի մեծ վէրք ունէր.
Նա չարչարվում էր, մնում էր կենդան:

Ահա, գալիս է մահուան հրեշտակը,
Բռնած մահառիթ սուսերը ձեռքին.
Դա չար Ասկարն է—այն աւազակը,
Դա մօտենում է անմեղ զոհերին:

«Ո՛հ, Ասկար... Ասկար... անխի՛ղճ, ի՞նչ արիր...
Մահուան տանջանքում ձայն տուաւ ծաթման,
«Տե՛ս... աղջիկ է դա... մօտեցի՛ր... նայի՛ր...
«Բայց աղաչում եմ... մի՛ գիպել նորան»...

Ասկարը կանգնեց լուռ և քարացած,
Սարսափեց, դողաց նա բոլոր մարմնով.
Տեսաւ նազլուի ստինքը բացուած,
Երկար ծամերը թուխ ալեքներով:

— Ների՛ր ինձ, Ծաթմա, սխալուած եմ ես...
Գրկելով նորան խօսեց Ասկարը:
— Երբէք չեմ գործած մի յանցանք այդպէս,
— Փուչ Զիրան եղաւ դորա պատճառը...

«Ես հասկացայ քեզ... բայց անգութ Զիրան...
«Մի՞թէ չըզիտէր... Ասկար... ի՞նչ ասեմ...
«Ես չեմ անիծիլ... Երբէք և նորան...
«Բայց խեղճ... Նազլուին... թոյլ տուր համբուրեմ...

«Ներում եմ, Ասկար... իմ արեան համար...
«Դու մի արտասուիր... Սակայն խնդրում եմ...
«Այդ երկրորդ զոհիդ... հայոց զիւղը տա՛ր...
«Նիգարից... հարցրո՛ւ... Իսկ ես... մեռնում եմ...

Նա ձգուեց դէպի ընկած դիակին.
Երկար համբուրեց գունատ այտերից:
Նա մի անգ քաշեց և ագնիւ հոգին
Շուտով բաժանուեց ուժասպառ մարմնից...

VIII.

Կատաղած կանգնեց Ասկարը տեղից,
Շուտափոյթ գնաց դէպ վրաններին,
Քաշելով բերաւ՝ բռնած ծամերից՝
Երկրորդ կնոջը—մատնիչ Զիրային:

Եկան նորանց հետ և ժառանգները՝
Նոյնպէս Նիգարը լանջքը ծեծելով՝
«ձե՛ր չըկուրացան իմ զոյգ աչքերը»...
Ողբաց Նիգարը զհանին չոքելով:

«Կի՛ն դու անամօթ, լի՛րբ և անպատկառ»...
Գռուաց Ասկարը Զիրայի վերայ,
«Մեռցրի նորանց, բայց ուրախացա՛ր...
Նայի՛ր զոհերիդ, չար դու սատանայ...

«Իմ ամբողջ կեանքում ես չեմ անարգուած.
«Յաղթածիս երբէք ես չեմ սպանել:
«Բայց քո պատճառով մնում եմ կարմրած.
«Կանանց արիւնով ձեռքերս եմ ներկել...

«Է՛յ, տղէ՛քք, եկէ՛ք, հեռացրէ՛ք սորան:
 «Տարէ՛ք այս լերբին, մորթեցէ՛ք ձորում:
 «Մի ըոպպէ անգամ չըթողնէ՛ք կենդան,
 «Եօթն անգամ գնտակ ցցեցէ՛ք սրտում»...

Շուտով Ասկարը մաքուր լուացուեց,
 Բոլոր գաղանիքը լսեց Նիգարից,
 Գնաց նա, չոբեց, նա մազ կատարեց,
 Վճռեց փարատուիլ բոլոր մեղքերից:

Ահա, կանչում է նա ընկերներին
 Եւ խրախուսում է այդ տեղեց ցրուել:
 Վերջ տալ մի անգամ անվայել գործին
 Եւ օրուայ հացը քրտինքով գտնել:

Նա պատուիրում է պառաւ Նիգարին
 Մի գեղեցիկ տեղ Ծաթմային թաղել,
 Նորանից ծնուած միակ մանուկին
 Ամեն ժամանակ խնամատար լինել:

Նա մօտենում է իր նժոյզ ձիուն,
 Փաղաքշում վիզը, համբուրում նորան.
 Նա խոստանում է տալ հանգստութիւն,
 Զրնեղացնել նորան յաւիտեան:

Նա ար է քաշում նեղ սրտի խորքից.
 (Բայց նա պիտ տանէր իւր անմեղ զոհին):
 Նա բաժանվում է սիրելիներից,
 Տանում է զոհին, յանձնում հայ գիւղին:

Եւ այնուհետեւ սեւացած սրտով
 Գնում է մտնում դատաստանատուն,
 Յանցանքի համար անկեղծ յայտնելով,
 Խնդրում է բանալ գործին քննութիւն:

Այսպէս Ասկարը մերժեց սուսերը
 Եւ յօժարաբար ընդունեց շղթան.
 Նա հեռու թողեց կանաչ դաշտերը
 Եւ վիհ անունը սուրբ աղատութեան:

XI.

Անցաւ ժամանակ: Մի առաւօտ է:
 Դժբախտ Նազլուի հայրենի գիւղում
 Կանգնած է մի մարդ, կարծես, ծանօթ է.
 Դա թուրք աղան է, գործ է կատարում:

Այդ տեղ է նոյնպէս հայ ժողովուրդը
 Եւ նոցա անմիտ, լիբբ տանուտէրը,
 Բայց ի՞նչ է արդեօք նոցա խորհուրդը.
 Ծախում են մէկի չնչին կայքերը:

Ամեն մի տանից ծուխ է բարձրանում,
 Ամեն մի բակում մարդիկ կան կանգնած,
 Բայց մի նկուղում կեանք չի երևում՝
 Նորա կտրին է ժողովը կանգնած:

Կրղարհուրէր մարդ ժողովի գործից,
 Անէծք կը թափէր այդ զիւղի գլխին.
 Կ'ամաչէր հայը նոցա արարքից,
 Կըսկսէր ատել նաև իւր ազգին:

Եւ անգութ աղան՝ օգուտ քաղելով
 Մի ստրկացած, մի թշուառ զիւղից,
 Պարծենում էր միշտ յոյժով և փառքով,
 Խլելով հացը աղքատի ձեռքից:

Նա ընդունուած էր իբրև բարեգործ,
 Իբրև բարի մարդ, իբրև խնամատար,
 Սակայն նա մարդ էր սաստիկ չարագործ.
 Նա կեանքի ցեց էր, ապուշ, անարդար:

Նա ապրում էր միշտ հարուստ և շքեղ՝
 Քաշելով կեանքի վայելչութիւնը.
 Հափում էր անթիւ հոգիներ անմեղ,
 Ոտնակոխ անում ճշմարտութիւնը:

Նա անկոչ հիւր էր խեղճ հայի համար,
 Բայց հարգում էին աղքատ և հարուստ.
 Նա սպասում էր միջոցին յարմար,
 Որ քչէր հային մինչ վերջին կորուստ:

Բայց մեր զիւղացիք... սակայն ի՞նչ ասեմ...
 Ամաչում եմ ես, չեմ կարող խօսել...
 Լաւ է որ նոցա հստակ թողնեմ
 Եւ շարունակեմ Արեւից պատմել:

X.

Տխուր, սրտաբեկ և անմխիթար
 Դեռ թափառում էր հովիւ Արեւը.
 Դեռ նա տանջվում էր սաստիկ չարաչար՝
 Ընկած միայնակ մութ անտառները:

Ամեն մի ծառի մօտով անցնելիս
Մոլորուածի պէս կանգնում էր տրտում,
Խեղագարի պէս հարցեր էր տալիս.
Զէ՞ նստել նազլուն նոցա ստուերում:

Եթէ տեսնում էր նա մի անցաւոր,
Նա մօտենում էր, հարց ու փորձ անում,
Բայց միշտ մնում էր նոյնպէս սգաւոր.
Մի ուրախ համբաւ երբէք չէր լսում...

Նա շարունակում էր իւր ճանապարհը,
Մտնում էր նոյնպէս և անթիւ գիւղեր.
Գնում էր շրջիլ ամբողջ աշխարհը,
Որ՝ գուցէ՝ մէկ տեղ նազլուին գտնէր:

Ահա՛, տեսնում է ճանապարհի մօտ
Մի բարձր կաղնի՝ բուսած միայնակ,
Ծառից քաշած է բազմադոյն նարօտ,
Մի տապանաքար ընկած նորա տակ:

Նա ճանաչում է այդ սրբատեղին
Եւ իսկոյն այնտեղ չոքում, աղօթում...
Նա աղաչում է զօրաւոր սրբին
Եւ անթիւ զոհեր նորան խոստանում:

XI.

Ահա՛, վերջապէս, Աբէլը գտաւ
Իւր հարսնացուի սև գերեզմանը:
Կտրած ծառի պէս նա զետին ընկաւ...
Կարծես՝ վերջացաւ կեանքի սահմանը...

Այո՛, չըկար նա, որին սիրում էր
Թշուառ Աբէլը իւր բոլոր սրտով...
Այո՛, չըկար նա, որին փնտռում էր
Խղճալի տղան լալով ողբալով...

Նազլուի հողին, կարծես, եթերբից
Նայում էր տխուր այն փլատակներին,
Ուր բաժանուեց նա իւր զարդարանքից,
Ուր նա կորցրեց իւր յոյսը վերջին...

Երկար մնում է ուշաթափ ընկած
Գերեզմանի վերայ տարաբախտ տղան.
Անանցանելի արդեւք էր դրած
Աբէլի առջև մինչև յաւիտեան...

Նա բարձրանում է, կանգնում է տեղից,
Բայց իւր անցեալից ոչինչ չէ յիշում:
Նա վերացել է, կարծես, աշխարհից,
Միայն ձեռքերով մի բան է փնտռում:

Մի երազ դարձաւ Աբէլի ներկան...
Նա աննպատակ զնաց թափառել:
Ի՞նչ էր կարող տալ նորան անպահան,
Երբ անոյժ էր նա դատել, մտածել...

Հարուստ քաղաքի շքեղ փողոցում
Մի օր կանգնած էր հովիւ Աբէլը,
Կիսամերկ մարմնով ցնցոտիներում
Եւ գետնին ուղղած անկեանք աչքերը...

Ձար երեխաները՝ ծաղրելով նորան,
Ձուարձանում էին ամբողջ ժամերով:
Եւ հալածում էր ամեն ոտախկան,
Խռկում փողոցից հայհոյանքներով...

Նա զիշերում էր բաց երկնքի տակ,
Ամեն անկիւնում, ուր յաջողվում էր.
Ըստացած հացը ամեն ժամանակ
Ուղղների հետ նա բաժանում էր:

Նա ոչինչ չունէր աշխարհի վերայ.
Նա իւր վիճակից ոչինչ չէր սպասում...
Սեյդ մաշուած սիրտը չունէր առարկայ...
Նա իւր Նաղլուին երբեք չէր յիշում...


Բայց կար ժամանակ, որ նորա սրտում
Տրոփում էր սաստիկ սիրոյ զգայմունքը.
Սրնդի լեզուովն էր նա միշտ հաղորդում
Իւր սիրելիին սրտի յուզմունքը...

Եւ կար ժամանակ, երբ ազատ, ուրախ
Լեռների վերայ, կանաչ դաշտերում
Նա ապրում էր միշտ անհոգ և անկախ,
Համեստ վիճակից բաւական մնում...

Ստիպան ուրացան բոլորն Աբէլին.
Թողեցին նորան միշտ անմխիթար...
Եւ նա խոնարհուեց դառը վիճակին,
Մինչև զերեզման մնաց խելադար...

1889 ամի, 25 դեկտեմբ.
Գ Ա Ն Զ Ա Կ.





89

h

Onp

2400



ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

2013

13076

